



Ճ Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

2017թ. թիվ 30

ՀՈՒՆԻՍԻ 23-Ը՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՕՐ

2003թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հունիսի 23-ը ընդունել է որպես Հանրային ծառայությունների միջազգային օր: Հաշվի առնելով նշվածը և հանրային ծառայողի առաջնային դերը մեր երկրի զարգացման գործում՝ Հայաստանի պետհիմնարկների արհմիության նախագահությունը որոշում է ընդունել դիմել ՀՀ կառավարություն՝ հունիսի 23-ը Հայաստանում Հանրային ծառայողի օր հռչակելու առաջարկով:

Ճյուղային արհմիության նախագահի՝ ՀՀ վարչապետին ուղղված գրության մեջ նշվում է.

«Ինչպես հայտնի է, 2003 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 57/277 բանաձևով հունիսի 23-ը հռչակված է Հանրային ծառայությունների օր: Այն կոչված է նշելու հանրային ծառայությունների արժեքն ու դերը հանրության շրջանում, ընդգծելու դրանց ներդրումը երկրների զարգացման գործընթացում, ճանաչելու հանրային ծառայողների աշխատանքը և ողջունելու երիտասարդների՝ հանրային ծառայության ոլորտում աշխատելու ձգտումը:

Համոզված ենք, որ առանց պետական ու համայնքային ծառայողների արհեստավարժ և անձնուրաց աշխատանքի հնարավոր չէ ինքնիշխան և հզոր հանրապետության կայացումը:

Հաշվի առնելով հանրային ծառայողի առաջնային դերը ինքնիշխան, անկախ, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության կայացման գործում և միջազգային փորձը՝ Հայաստանի պետհիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային արհմիության նախագահությունը առաջարկում է Հայաստանի Հանրապետությունում հունիսի 23-ը ընդունել որպես Հանրային ծառայողի օր»:

ՄԱՅԻՄՄԵԿՅԱՆ ԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐՈՎ

Աշխատանքի օրը՝ մայիսի 1-ին, Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների հանրապետական արհմիությունը խաղաղ երթ անցկացրեց մայրաքաղաքի կենտրոնական փողոցներում:

Մինչ երթի մեկնարկը պետհիմնարկների արհմիության նախագահ Ա.Ասատրյանը դիմեց հավաքվածներին՝ հնչեցնելով արհմիության դիրքորոշումը վերջին շրջանում կառավարության վարած քաղաքականության վերաբերյալ.

«Հարգելի արհմիութենականներ:

Այսօր աշխատողների համերաշխության միջազգային օրն է. այն օրը, երբ ամբողջ աշխարհում աշխատողները և նրանց ներկայացուցիչները՝ արհմիությունները, տարատեսակ

գործողություններով իրենց վերաբերմունքն են արտահայտում կառավարությունների կողմից վարվող քաղաքականություններին:

Մենք շուտով նոր կառավարություն ենք ունենալու, բայց արդեն գիտենք, որ այն շարունակելու է իրագործել նախորդի ծրագիրը: Ինչո՞վ էր առանձնահատուկ այս կառավարությունը. այն վեց ամիսների կառավարման ամբողջ ընթացքում կառավարման արդյունավետության հասնելու պատրվակով պետական աշխատողների մեծամասշտաբ կրճատումներ էր պլանավորում: Այդ քաղաքականությունը արդեն վեց ամիս անորոշության և լարվածության մեջ է պահում պետական աշխատողներին, ինչը լուրջ սպառնալիք է նրանց առողջությանը: Հասարակության շրջանում պետական աշխատողների վարկանիշը գցելուն զգալիորեն նպաստեցին նաև ՁԼՄ-ները՝ շատ դեպքերում պետական ծառայողին ներկայացնելով որպես «բյուջեից սնվող ձրիակեր»:

Կառավարությունը պարտավոր է վերականգնել պետական ծառայողի բարի համբավը: Հասարակությանը պետք է ներկայացվի, որ պետական աշխատողների մեծ մասը բարեխիղճ, կրթված, հայրենասեր, իրենց գործին նվիրված աշխատողներ են, և պետք չէ նրանց նույնականացնել մի խումբ կոռուսպացված չինովնիկների հետ:

Մենք հիշեցնում ենք կառավարությանը, որ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է, որ պետությունը բիզնես չէ, և սոցիալականը միշտ պետք է առաջնահերթ լինի: Մարդը գերագույն արժեք է, դա հենց կառավարության ծրագրի առանցքային դրույթն է, և կառավարությունը միշտ պետք է հիշի դրա մասին:

Տնտեսության զարգացումը շատ կարևոր է, բայց չի կարելի զարգացնել մեկը մյուսի հաշվին, չի կարելի աջակցել բիզնեսին ՀՀ աշխատող քաղաքացիների հաշվին, ինչպես այսօր փորձ է արվում անել: Մենք դեմ ենք արտահայտվել աշխատանքային օրենսգրքի առաջարկվող փոփոխություններին և պնդում ենք, որ դրանք խախտում են աշխատողների իրավունքները:

Մենք ապագա կառավարությանը կոչ ենք անում վարել արդար հարկային քաղաքականություն. նորից պետք է հիշեցնեմ, որ աշխատողներն են ապահովում մեր երկրի բյուջեի մուտքերի 1/3-ը: Մենք վճարում ենք մեր բաժին հարկերը, պետք է վճարի նաև բիզնեսը:

Կառավարությունը հաջողության կհասնի միայն այն ժամանակ, երբ սկսի հաշվի նստել աշխատողների և արհմիությունների հետ: Կարծում եմ, որ մի օր ստիպված են լինելու հաշվի նստել մեզ հետ»:

Այնուհետև մոտ 600 մասնակիցներով երթը մեկնարկեց Իսահակյանի արձանի մոտից՝ կարգախոսելով «Սոցիալական արդարություն», «Արժանապատիվ աշխատանք», «Սոցիալականը նյութականից առաջ», «Մարդը շահույթից վեր է», «Պետությունը բիզնես չէ», «Մարդը գերագույն արժեք է», «Պետական աշխատողը առաջնագծում» և այլ պահանջներ:

Հյուսիսային պողոտայում պետական հիմնարկների աշխատողները միացան Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիային և գործընկեր ճյուղային հանրապետական արհմիություններին և միասնության, համերեշխության ոգով, սոցիալական արդարության և այլ պահանջ-կարգախոսներով շարունակեցին երթը մինչև Հանրապետության հրապարակ:

ՆՊԱՍՏԵՆՔ ՊՐՈՖՏՈՒՐԻ ԱՄՐԱՊԵՏԱՆԸ

Ընդլայնվել է արհմիության «Պրոֆտուր» ընկերության ծառայությունների շրջանակը. բացի Հայաստանում ու արտերկրում հյուրանոցային ու առողջարանային ծառայություններից, ընկերությունն առաջարկում է ավիատոմսեր ցանկացած ուղղությամբ:

Սոցիալական փաթեթի շահառուներին «Պրոֆտուրն» առաջարկում է Հայաստանում ու Արցախում հանգստի առաջարկների լայն ընտրանի:

Սոցփաթեթից դուրս արհմիության անդամներին առաջարկում ենք փոխաշահավետ համագործակցություն. Հայաստանում հանգստի և առողջարանային բուժման ծառայություններից օգտվելիս ուղեգիրը ձեռք կբերեք զեղչված գնով:

ՄԱՅԻՍՅԱՆ ԵՌԱՏՈՆԸ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԵՎԻ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի պետիմնարկների արհմիության երիտասարդական թևի ներկայացիչները արհմիության նախագահ Ա. Ասատրյանի և գլխ. հաշվապահ Ռ.Օհանջանյանի մասնակցությամբ մայիսյան եռատոնի խորհրդով պատմական-ճանաչողական այց կատարեցին Հայաստանի հարավային շրջաններ: Մյուսյաց երբեմնի հոգևոր կենտրոն Նորավանքում աղոթքներ հղեցին ի հիշատակ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների և ի փառս Շուշիի ազատագրման հերոսների, քարանձավային Խնձորեսկ քաղաքում ծանոթացան անձավներում մինչև նախորդ դարի կեսերն ապրած խնձորեսկցու բարքերին, անցան տեղացիների ձեռքերով կառուցված ճոճվող կամրջով, հարգանքի տուրք մատուցեցին սյունյաց պահապան Մխիթար Սպարապետի հիշատակին, հայ ճարտարապետության հնագույն ու բացառիկ նմուշ Տաթևի վանական համալիրում հիացան անառիկ պարիսպներով, բացառիկ ճոճվող գավազանով, հնագույն որմնանկարներով, Արենու Թռչունների քարանձավով, ուր հայտնաբերվել է աշխարհի հնագույն՝ 5500-ամյա կոշիկը, այցելուների պակաս չունեցող Շաքիի չքնաղ ջրվեժով:

Այցը նաև ամենահարմար առիթն էր՝ հայ մտքի հանճարներից երկուսի՝ Ակսել Բակունցի ու Պարույր Սևակի տուն-թանգարաններ այցելության, նրանց ստեղծագործության ու կյանքի դրվագներին ականջալուր լինելու:

Արհմիութենականները համոզվեցին, որ իրենց տեսած ու լսածով հայոց լեռների գաղտնիքները չեն վերջանում: Դրանք լավ թաքնված են նրա բազմաթիվ քարանձավերի խորքերում, որոնցից յուրաքանչյուրն իրենից մի պատմություն է ներկայացնում:

*** *** ***

Մայիսի 9-ին՝ Հաղթանակի օրը, ճյուղային արհմիության աշխատակազմի ներկայացուցիչները ՀԱՄԿ-ի ղեկավարության, աշխատակազմի ճյուղային արհմիությունների ներկայացուցիչների հետ հարգանքի տուրք մատուցեցին Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին:

Արդեն 72-րդ տարին անհայտ զինվորի կորուստը խորհրդանշող անմար կրակի շուրջ ծաղիկներ են խոնարհվում՝ ի հարգանս Հայրենական մեծ պատերազմում զոհված ու անհայտ կորած հայորդիների:

*** *** ***

Ապրիլի 24-ին, ի հիշատակ հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի, Հայաստանի պետիմնարկների արհմիության աշխատակազմը, երիտասարդական թևի ներկայացուցիչների, ՀԱՄԿ-ի և ճյուղային հանրապետական արհմիությունների ներկայացուցիչների հետ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և ծաղիկներ խոնարհեց 1915թ. ցեղասպանությանը զոհերի հիշատակին:

Անմար կրակի մոտ մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը հարգելը դարձել է ոչ միայն աշխարհասփյուռ հայերի, այլև օտարերկրացիների բարոյական պարտքը:

ԱՄԵՆՔԻՆ ՀԱՐԱԶԱՏ, ԱՄԵՆՔԻՆ ԲԱՐԵԿԱՍ

Հայաստանի պետիմնարկների արհմիությունը հրաժեշտ տվեց Երևանի քաղաքապետարանի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ, ճյուղային միության նախագահության ու խորհրդի անդամ Ջուլիետտա Գրիգորյանին, նախագահության պատվավոր անդամ Կառլեն Խանգելյանին, Վարդենիսի տարածքային արհմիության նախագահ, ճյուղային արհմիության խորհրդի անդամ Արծրունի Մանուկյանին:

Ապրում էին սիրով ու հարգանքով շրջապատված: Նրանց արհմիութենական աշխատանքը ճյուղային արհմիությունում միշտ գնահատանքի էր արժանանում:

Նրանց հիշատակը ընդմիշտ վառ կմնա նրանց ճանաչող բոլոր-բոլորի սրտերում:

«ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆ». ՄԵՄԻՆԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հունիսի 8-ին Հայաստանի պետիմնարկների արհմիության կազմակերպված սեմինարի հիմնական նպատակը երիտասարդ արհմիութենականներին արհմիության հիմքերի հետ ծանոթացումն էր: Մասնակիցները շուրջ քսան երիտասարդներ էին ՃՀՄ անդամ կազմակերպություններից՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից, Աջափնյակ, Արաբկիր, Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերից, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունից, Խարբերդի մասնագիտացված մանկատնից, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեից, ՀՀ կառավարության աշխատակազմից, «Սպասարկում» ՊՈԱԿ-ից, Հրազդանի տարածքային արհմիությունից:

Սեմինարի ընթացքում երիտասարդ աշխատողները ծանոթացան արհմիության գործունեությանը, կառուցվածքին, իրավունքներին, այլ կառույցների հետ համագործակցությանը, խմբային աշխատանքների միջոցով ներկայացրին իրենց հայտնի արհմիութենական գործողությունները և այլն:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ապրիլի 20-ին ՀԱՄԿ-ի դահլիճում կայացել է հանդիպում Իրավաբանների հայկական ասոցիացիայի ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը մասնակցում էին ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Բ.Խարատյանը, բաժինների պատասխանատուներ, ճյուղային արհմիությունների նախագահներ:

Հանդիպման առիթը Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն էր: Ծրագրի հիմնական նպատակը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցով հանրային քաղաքականությունների մշակման գործընթացի վրա ազդեցության ուժեղացումն է, նրանց մասնակցությունը հանրային քաղաքականությունների ձևավորման գործընթացներին, թիրախային ոլորտներում խնդիրների վերհանումը և համապատասխան քաղաքականությունների մշակումը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների հետ կառուցողական և ռազմավարական փոխգործակցությունը:

Արհմիությունների խնդիրների վերհանումը ծրագրի իրականացման քայլերից մեկն է, և ամփոփիչ գեկույցում հրապարակվելու են նաև արհմիությունների տեսակետները:

Արհմիության ղեկավարները նշեցին տարբեր ոլորտներում արհմիությունների ուժեղ և թույլ կողմերը, առկա խնդիրները, դրանց ուղղությամբ տարվող աշխատանքներն ու արդյունքները:

Պետիմնարկների հանրապետական արհմիության նախագահ Ա.Ասատրյանը ներկայացրել է պետական հիմնարկներում առկա այնպիսի գլոբալ խնդիրներ, ինչպիսիք են կոլեկտիվ պայմանագրերում աշխատողների համար նյութական երաշխիքներ նախատեսելու անհնարինությունը, արհմիությունների գործունեության խոչընդոտումը հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից և այլն: Ուստի, ըստ ճյուղային միության նախագահի, արհմիութենական մասնագետներ պատրաստելուց զատ իրազեկման աշխատանքներ են անհրաժեշտ նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների շրջանում:

ԱՄՖ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Մայիսի 31-ին ՌԴ Սանկտ Պետերբուրգ քաղաքում կայացել է Պետական հիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհմիությունների միջազգային ֆեդերացիայի խորհրդի հերթական նիստը:

Հայաստանի պետիմնարկների արհմիությունը նիստում ներկայացնում էր ԱՄՖ խորհրդի անդամ, Հայաստանի պետիմնարկների հանրապետական արհմիության նախագահ Ա.Ասատրյանը:

Նիստին մասնակցում էին ԱՄՖ խորհրդի անդամներ ու ներկայացուցիչներ Ռուսաստանից, Լատվիայից, Մոլդովայից, Տաջիկստանից, Ղրղզստանից, Ղազախստանից, Իսրայելից, Բելառուսից: Նիստին մասնակցում էր նաև Արհմիությունների համընդհանուր համադաշնության (ԱՀՀ) գլխավոր քարտուղար Վ.Շերբակովը:

Օրակարգային հարցերի շրջանակում մասնակիցները ներկայացրել են տեղեկատվություն իրենց արհմիությունների մասին 2016թ. դեկտեմբերից 2017թ. մայիս ժամանակահատվածի համար, ամփոփվել են ԱՄՖ անդամ կազմակերպությունների նախորդ տարվա վիճակագրական տվյալները. 2016թ. արհմիության անդամների թվաքանակի ավելացման համար լավագույն անդամ կազմակերպություն է ճանաչվել Բելառուսի պետհիմնարկների արհմիությունը: Նիստում ներկայացվել է ԱՄՖ նախորդ տարվա եկամուտների ու ծախսերի ամփոփը, ԱՄՖ կազմից ընտրվել են պատվիրակներ ԱՀՀ համագումարի, խորհրդի համար, քննարկվել են նաև արհմիութենական, կազմակերպական այլ հարցեր: Ամփոփվել են նաև ԱՄՖ կանոնադրության և վերստուգիչ հանձնաժողովի կանոնակարգում փոփոխություններ կատարող աշխատանքային խմբի արդյունքները: Հայաստանի պետհիմնարկների արհմիության նախագահ Ա.Ասատրյանը համապատասխան հիմնավորումներով դեմ է արտահայտվել առաջարկված փոփոխություններին, որոնք ՃՀՄ նախագահության անունից գրավոր ներկայացվել էին ֆեդերացիային: Փոփոխությունները կներկայացվեն նաև ԱՄՖ համագումարի քննարկմանը, որը գումարվելու է սեպտեմբեր ամսին ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում:

Նիստում քննարկվել է նաև տարբեր երկրների մի շարք արհմիութենականների «ԱՄՖ-ն 25 տարեկան է» հոբելյանական պարզներով պարզատրելու մասին հարցը: Որոշման նախագծում Ադրբեջանի արհմիության կողմից հոբելյանական կրծքանշանով պարգևատրվողների թվում եղել են «արհմիութենականներ» Ադդամի, Լաչինի, Ջանգելանի, Թարթառի տարածքներից, որոնք, փաստորեն, ադրբեջանական տարածքներ չեն, և այդ տարածքներում գործում են արցախյան արհմիություններ: ԱՄՖ խորհրդի նիստից հետո ՃՀՄ նախագահությունը քննարկման արդյունքում որոշել է հրաժարվել կրծքանշաններից՝ դրանք համարելով արժեզրկված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑԻՆ ԳԵՐՄԱՆԱՅԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

Հունիսի 16-25-ը Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության նախաձեռնությամբ Հայաստանում էր գտնվում Գերմանիայի Դաշնության Հյուսիս-Հռենոսյան Վեստֆալիա նահանգի Գերմանական Արհմիությունների Միավորման (ԳԱՄ) երիտասարդական հատվածի (DGB-Youth NRW) պատվիրակությունը:

Գերմանացի արհմիութենականների այցը շարունակությունն էր նախորդ տարվա նոյեմբեր ամսին հայ երիտասարդ արհմիութենականների՝ նշված նահանգ կատարած այցի:

Փոխադարձ այցն իրականացվում էր «Ռազմավարություն և քարոզչություն երիտասարդական արհմիութենական աշխատանքում» ծրագրի շրջանակում, որի նպատակը երկու երկրների երիտասարդ արհմիութենականների ուսուցումն ու փորձի փոխանակումն էր:

Ծրագրում ընդգրկված միջոցառումներում մասնակցություն ունեցան հիմնադրամի հետ համագործակցող ճյուղային արհմիությունների, այդ թվում՝ պետհիմնարկների արհմիության, ՀԱՄԿ-ի խորհրդի երիտասարդական հանձնաժողովի ներկայացուցիչներ:

Հայաստանյան ծրագրի մեկնարկը տրվեց հունիսի 19-ին՝ մայրաքաղաքի «Անի» հյուրանոցի դահլիճում, որտեղ գերմանացի արհմիութենականներին ներկայացվեցին Հայաստանի արհմիությունները՝ պատմությունից, զարգացման ճանապարհից մինչև արդի մարտահրավերներ: Նույն օրը ՀԱՄԿ-ի խորհրդի մշտական գործող երիտասարդական հանձնաժողովի նախագահ Վ.Վարդանյանը գերմանացի արհմիութենականներին ծանոթացրեց ՀԱՄԿ-ի երիտասարդական հանձնաժողովի կառուցվածքին, աշխատանքի հիմնական ուղղություններին:

Հունիսի 20-ին պատվիրակության անդամները Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայում հանդիպում ունեցան ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Բ.Խարատյանի, աշխատակազմի մի քանի բաժինների ղեկավարների հետ: Հանդիպման ընթացքում կողմերը ներկայացրին իրենց կազմակերպությունների կառուցվածքը, հիմնախնդիրները, քննարկեցին արհմիութենական շարժմանը նպաստող հարցեր:

Լշված օրվա հաջորդ միջոցառումը ԳԱՄ-ի ներկայացուցիչների հանդիպումն էր Հայաստանի արհմիությունների տարբեր ճյուղերի երիտասարդների հետ: Հայ արհմիութենականներին ներկայացվեց ԳԱՄ-ի, ԳԱՄ-ի երիտասարդական հատվածի կառուցվածքն ու գործունեությունը: Փորձի փոխանակման նպատակով գերմանացի արհմիութենականները պատասխանեցին հավաքվածների տարաբնույթ հարցերին՝ կապված աշխատողների, արհմիությունների իրավունքների, դրանց խախտման դեպքերի, արհմիության անդամակցության, արհմիութենական միջոցառումների հետ և այլն:

Պատվիրակության անդամները նույն օրը հյուրընկալվեցին նաև Երևանի քաղաքապետարանում, որտեղ, ծանոթանալով տեղի արհմիութենական կազմակերպության ակտիվի հետ, տեղեկացան արհեստակցական կազմակերպության գործունեությանն ու խնդիրներին: Հանդիպմանը զուգահեռ հյուրերը շրջայց կատարեցին քաղաքապետարանի շենքում, Երևանի պատմության թանգարանում ծանոթացան Երևանի քաղաքի պատմությանը:

Հունիսի 21-ի միջոցառումների թվում պատվիրակության հանդիպումն էր ՀՀ ազգային վիճակագրական ծառայության արհմիության նախագահ Մ.Պետրոսյանի և ակտիվ երիտասարդների հետ: Հայ վիճակագիր արհմիութենականները գերմանացի հյուրերին ներկայացրին ԱՎԾ արհմիության կառուցվածքը, աշխատողների շահերի պաշտպանությունը, սոցիալական գործընկերության շրջանակում քննարկվող խնդիրները, տեղում և ճյուղային միության հետ իրականացվող միջոցառումները:

Հունիսի 22-ին գերմանացի արհմիութենականները Դիլիջանի համայնքապետարանում հանդիպում ունեցան համայնքի ղեկավարի տեղակալ Արմեն Մակարյանի հետ: Հանդիպմանը մասնակցում էին նաև Դիլիջանի տարածքի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհմիության նախագահ Ժենյա Թամրազյանը, Դիլիջանի քաղաքապետարանի արհեստակցական կազմակերպության նախագահ Սոնա Եգանյանը:

Ա.Մակարյանը ողջունեց Հայաստանի զբոսաշրջային ու միջազգային կրթական կենտրոն համարվող Դիլիջանում հյուրընկալվելու գերմանացի երիտասարդների նախաձեռնությունը, ներկայացրեց Դիլիջան քաղաքի նշանակությունը, սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը, անդրադարձավ համայնքի զարգացման ծրագրերին...

Գերմանացի արհմիութենականների՝ փոխքաղաքապետին ուղղված հարցերի շրջանակը բավականին լայն էր՝ արհմիության հետ համագործակցությունից, սոցիալական գործընկերության շրջանակում քննարկվող հարցերից, արհմիութենական միջոցառումներից մինչև համայնքի ղեկավարման մեխանիզմներ, ավագանու որոշումների բովանդակություն ու հայ-ադրբեջանական հակամարտություն...

Հանդիպումից դուրս պատվիրակության անդամները շրջայց կատարեցին Դիլիջանի համայնքապետարանում, քաղաքի տեսարժան վայրերում, այցելեցին Հաղարծնի վանական համալիր:

Գերմանական արհմիութենական պատվիրակության այցը շարունակվեց Տավուշի մարզկենտրոն Իջևանում, որտեղ արհմիութենականները հանդիպում ունեցան Իջևանի տարածքի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհմիության նախագահ Աիդա Աչինյանի, արհմիության երիտասարդ ներկայացուցիչների հետ: Տարածքային միության նախագահը ներկայացրեց տարածքային արհմիության կառուցվածք, իրականացվող միջոցառումները, կարևորեց արհմիության կողմից տարվող ուսուցողական միջոցառումները, ընդգծեց ճյուղային միության դերը արհմիութենական միջոցառումներում, ներկայացրեց

մարզկենտրոնի նշանակությունը հատկապես զբոսաշրջության ու կրթության ոլորտներում, մեջբերեց գերմանացիներին հետաքրքրող վիճակագրական տվյալներ: Ա.Աչինյանը նաև պատասխանեց գերմանացի արհմիութենականների տարաբնույթ հարցերին՝ կապված սահմանամերձ գոտում հայ-ադրբեջանական հակամարտության ազդեցությանը, բնակչության զբաղվածությանը միտված քաղաքականությանը և այլն: Հանդիպման ավարտին տարածքային արհմիության նախագահը հույս հայտնեց, որ նման ձևաչափով համագործակցությունը շարունակական կլինի և կնպաստի արհմիութենական շարժմանը:

Պատվիրակության վերջին հանգրվանը Ծաղկաձոր քաղաքն էր, որտեղ Հայաստանի տարբեր ճյուղային արհմիությունների ավելի քան 30 երիտասարդ արհմիութենականների հետ անցկացվեց սեմինարների շարք՝ «Կոշտ խնայողության քաղաքականությունը և արհմիությունները», «Օրգանայզինգ», «Քարոզչություն, պլանավորում» թեմաներով: Գերմանացի ու հայ արհմիութենականները հնարավորություն ունեցան հանդիպելու ՀՀ կոտայքի մարզպետի տեղակալ Կարեն Մարգարյանի հետ, ով Ծաղկաձոր էր ժամանել Հայաստանի պետհիմնարկների արհմիության նախագահ Ա.Ասատրյանի հրավերով: Փոխմարզպետը ներկայացրեց մարզի բնութագիրը, պատասխանեց մասնակիցների հարցերին:

Օգտվելով հանրային ոլորտի արհմիութենականների հետ հանդիպման հնարավորությունից՝ պետհիմնարկների արհմիության նախագահը նշեց, որ հունիսի 23-ը ՄԱԿ-ի կողմից ընդունված է որպես հանրային ծառայությունների օր և իրազեկեց, որ հանրապետական արհմիության ղեկավար մարմնի որոշմամբ դիմել է ՀՀ կառավարություն՝ Հայաստանում հունիսի 23-ը Հանրային ծառայողի օր հռչակելու առաջարկով:

Գերմանական պատվիրակության վերջին հանդիպումը Հայաստանի պետհիմնարկների արհմիութենականների հետ «Արենա» բոուլինգ ակումբում էր, որտեղ ՃՀՄ անդամ տասնինը կազմակերպությունների թվում գերմանացի արհմիութենականների թիմը մասնակցեց բոուլինգի 5-րդ առաջնության:

Հանդիպումներից դուրս գերմանացի արհմիութենականները Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեցին 1915թ. զոհված հայերի հիշատակին, այցելեցին Հայաստանի պատմամշակութային վայրեր:

Նշված բոլոր միջոցառումներում մեծ թվով ընդգրկված էին Հայաստանի պետհիմնարկների արհմիության երիտասարդական թևի ներկայացուցիչներ, որոնց ակտիվ մասնակցության արդյունքում ձևավորվեց հայ-գերմանական ինքնատիպ արհմիութենական ընկերություն:

Ք.ՍՈՖԻԱ. «21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ»

Բուլղարիայի անկախ արհմիությունների կոնֆեդերացիայի 8-րդ համագումարի շրջանակներում ապրիլի 30-ին Սոֆիայում տեղի է ունեցել 21-րդ դարի երիտասարդական ֆորում: Բուլղարիայի արհմիությունների կոնֆեդերացիայի և Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի կազմակերպած միջոցառմանը մասնակցում էին շուրջ 100 երիտասարդներ ինչպես Բուլղարիայի, այնպես էլ միջազգային արհմիութենական կառույցներից՝ այդ թվում Եվրոպայի հանրային ծառայությունների արհմիությունների միությունից, որի կազմում էր նաև Հայաստանի պետհիմնարկների արհմիության ներկայացուցիչը:

Ֆորումի հիմնական թեմաներից առանձնացնենք հետևյալները՝

«Թվայնացում. եկամտի², թե՞ հասարակության զարգացման համար»

Թեմայի շրջանակում քննարկվել են այն խնդիրները, որոնց առջև կանգնել են աշխարհը, աշխատաշուկան ու հասարակությունը թվային տեխնոլոգիաների արագ զարգացման արդյունքում: Չնայած Արևելյան Եվրոպայի երկրներում էլեկտրոնային առևտուրը և այլ ծառայություններ զարգացվածության այն մակարդակը չունեն, ինչպիսին ԱՄՆ-ում, Ասիայում ու Արևմտյան Եվրոպայում է, այնուամենայնիվ, ԱՄՆ-ում և ԵՄ-ում այսօրվա հաստիքների համապատասխանաբար 47% և 54%-ը առաջիկա տասնամյակներում կարող են փոխարինվել

մեքենաներով: Այս պարագայում կարևոր հարց է ծագում. թվային ծառայությունները ստեղծվում են միայն եկամուտ ապահովելու, թե հասարակության զարգացման համար: Մասնավորապես՝ -արդյո՞ք այս բոլոր նորամուծությունները մեզ ավելի լավ հասարակություն են դարձնում -ապահովում են արդյոք դրանք սոցիալական պաշտպանվածություն աշխատողների համար -որտե՞ղ է լինելու արհմիությունների դերը այս նոր միջավայրում:

Այն պարագայում, երբ մարդիկ փոխարինվում են ռոբոտներով, երբ առևտուրն ու ապրանքները դառնում են վիրտուալ, արհմիութենական ակտիվիստներն ու փորձագետները առաջարկում են մշակել այնպիսի նոր մոտեցումներ, ինչպիսին է, օրինակ, նոր տիպի հարկերի կիրառումը: Այս առումով Բուլղարիայի անկախ արհմիությունների կոնֆեդերացիայի ղեկավարը կարծիք է հայտնել, որ թվայնացում պետք է արվի ոչ թե էժան աշխատուժի և հեշտացված աշխատանքային հարաբերությունների համար, այլ միմիայն որակյալ աշխատանքի համար:

«Քաղաքական գրագիտությունը կարևոր է»

Ֆորումի ընթացքում սոցիալական շահերի պաշտպանությունը քննարկելիս ընդգծվել է, որ արագ փոփոխվող և մանիպուլյատիվ աշխարհում աշխատողների ու առհասարակ հասարակության շրջանում կարևոր է քաղաքական գրագիտությունը: Շոշափվել է ՏՏ ոլորտի ֆենոմենը, քանի որ այս ոլորտում աշխատողները նույնիսկ հետաքրքրված էլ չեն միավորվելու աշխատանքային ոլորտի հարցերով: Նման ընկերությունները միշտ ներկայանում են որպես գերհարմարավետ. աշխատողներն ունեն բարձր եկամուտ, լավ պայմաններ ու «գոհ» են իրենց աշխատանքից: Ֆորումի մասնակիցները թե՛ քննարկում են ունեցել՝ արդյո՞ք իմաստ ունի միավորել աշխատողներին, ովքեր դրա ցանկությունն ու պահանջը չունեն, և արդյո՞ք նորմալ է, որ աշխատողն այնքան գոհ է, որ հետաքրքրված չէ միավորվելով:

ՓՈՓՈՒՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ԼԻՏՎԱՅՈՒՏ

Լիտվայում հուլիսի 1-ից գործում է նոր՝ փոփոխված աշխատանքային օրենսգիրք: Տևական քննարկումներից հետո ընդունված ԱՕ-ի վերաբերյալ երկրի նախագահը հրապարակավ նշել է, որ թեև նոր ԱՕ-ում հաշվի են առնվել քննարկումները, սակայն կառավարության և իշխող մեծամասնության՝ աշխատողներին ավելի լավ պաշտպանելու խոստումներն այդպես էլ անկատար են մնացել և անհրաժեշտ է համարել շտկել օրենսգիրքը:

Աշխատողների օգտին արված փոփոխություններից առանձնացնենք հետևյալները.

Լիտվայի փոփոխված աշխատանքային օրենսգրքով այսուհետ նվազագույն աշխատավարձ են ստանալու միայն որակավորում չունեցող մասնագետները: Առաջին անգամ սահմանվել է չորակավորված աշխատանքը՝ աշխատանք, որը կատարելու համար չեն պահանջվում հատուկ մասնագիտական գիտելիքներ: Նոր ԱՕ-ով գործատուները պետք է կարգավորեն աշխատանքի վարձատրության համակարգը՝ խտրականություններից խուսափելու համար: Լիտվայում կնոջ և տղամարդու աշխատավարձերի տարբերությունը բավականին լուրջ խնդիր է, որի լուծումը տրվում է նոր օրենսգրքով: Միևնույն աշխատանքի դիմաց կինն ու տղամարդը վարձատրվում են միաչափ:

Նոր պահանջներ են ներկայացվում գործատուներին, որոնց կատարման դեպքում կբարձրանա աշխատողների աշխատավարձը: Սահմանվում է նաև, որ գործատուն պարտավոր է հաստատել աշխատանքի վարձատրության համակարգը, եթե կոլեկտիվ պայմանագրով այն կարգավորված չէ: Միջինում 10 և ավել աշխատող ունեցող գործատուն պարտավորվում է հաստատված աշխատանքի վարձատրության համակարգը հասանելի դարձնել բոլոր աշխատողներին, իսկ վարձատրության մեխանիզմի հաստատումը կամ փոփոխումը ենթակա են քննարկման: Առաջին անգամ սահմանվում է նաև նմանատիպ աշխատանք հասկացությունը. նմանատիպ են այն աշխատանքները, որոնք օբյեկտիվ չափանիշներով ավել կամ պակաս որակավորում չեն պահանջում, իրար նման են կամ նույնն են այնչափ, որ երկու աշխատողներն էլ կարող են փոխարինել իրար, ինչը գործատուից հավելյալ ծախս չի պահանջում: Յուրաքանչյուր աշխատող պետք է իմանա, թե ինչ չափանիշներով է հաշվարկվում իր աշխատավարձը, ինչու է ինքը մյուսներից ավել վարձատրվում, և որ աշխատավարձերի տարբերությունը պայմանավորված է ոչ թե սեռային կամ այլ խտրական հանգամանքներով, այլ բանիմացությամբ, հմտությամբ, աշխատանքի բարդությամբ ու պատասխանատվությամբ: